

**Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝  
ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող Եղեգնաձորի մշակույթի  
կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի տնօրենի  
թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

Տնօրենի ընտրության (նշանակման)

1) պարտադիր պայմաններն են՝

ա. բարձրագույն կրթություն՝

բ. հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

գ. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր).

դ. պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն:

2) լրացուցիչ պայմաններն են՝

ա. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

բ. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

դ. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ իմացություն.

ե. ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

զ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն,

**Մրցույթը կկայանա 2020 թվականի ապիլի 10-ին՝ ժամը 11:00**

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող Աշխատակազմին ներկայացնում են՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) կադրերի հաշվառման թերթիկ (լրացված).

7) տեղեկանք մշտական բնակության վայրից.

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում).

9) բնութագիր վերջին աշխատավայրից (երե կազմակերպությունը չի լուծարվել):

9. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 11<sup>00</sup> -16<sup>00</sup> , բացի շաբաթ և կիրակի օրերից:

*Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի մարտի 9-ը :*

**Մրցույթը կկայանա Վայոց ձորի մարզպետարանի շենքում (ք.Եղեգնաձոր, Շահումյան 5):**

*Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի (հեռ.+374281-2-55-95)(ք.Եղեգնաձոր, Շահումյան 5):*